community

The New Apostolic Church around the world

02/2024/AM

Աստծո հետ երկխոսության մեջ

Խմբագրական
Ճիշտ աղոթելու մասին

Ժամերգություն
Աղոթելը գործում է

Վարդապետական ուսմունք
Աստծո պատկերներ և
ճշմարիտ Աստված

New Apostolic Church
International

Խմբագրական

3 Ճիշտ աղոթելու մասին

Ժամերգություն

4 Աղոթելը գործում է

Մանկական անկյուն

10 Եղիան և Սարեփթայի այրին

12 Այցելություն Էդվինին՝ Վերվեռում / Բելգիա/

Տեսություն

14 Աստված – ինչ են մարդիկ տեսնում և ինչպիսին է նա իրականում

Ընդհանուր լուրեր

18 Եկեղեցու ղեկավարումը սերնդափոխությամբ

Տիտղոսաթերթի լուսանկարը՝ Ֆրանկ Շուլդթի
Շապիկի ետևի լուսանկարը՝ Ֆրանկ Շուլդթի

Ճիշտ աղոթելու մասին

Լուսանկարը՝ Միջազգային Նորաարքեպիսկոպոսաց ընդհանուր վիճակագրության

Հիսուսը խոստացել է՝ եթե դուք հավաքվում եք իմ անունով և խնդրում եք իմ անունով, ապա դուք այն կստանաք: Ամեն անգամ, երբ մենք հավաքվում ենք Հիսուսի անունով աղոթելու, նա մեր մեջ է լինում և աղոթում է մեզ հետ:

Երբ մենք Հիսուսի անունով հավաքվում ենք և Աստծուց խնդրում ենք այն, ինչը Հիսուսը մեզ համար Աստծուց խնդրել է, ապա Հիսուսը աղոթում է մեզ հետ: Սակայն, մենք պետք է խնդրենք նույնը, ինչը՝ նա: Ով որ աղոթում է այսպես՝ ,, Աստված, ես ցանկանում եմ շատ-շատ հարուստ լինել,, ; ապա նա չի կարող ունենալ այն ակնկալիքը, որ Հիսուսն էլ է իր հետ աղոթում, քանի որ Հիսուսը բոլորովին այլ բան է ասում փողի և հարստության մասին: Եվ, եթե ես աղոթում եմ այսպես՝ ,, Հիսուս, դու պետք է իմ թշնամուն պատժես,, ; ապա ես չեմ կարող ակնկալիք ունենալ, որ Հիսուսն էլ է ինձ հետ աղոթելու, քանի որ նա դրա հետ համաձայն չի լինի: Նման աղոթքները չեն լսվում, որովհետև դրանք չեն համապատասխանում Հիսուսի աղոթքներին:

Ինչու՞ է Հիսուսը մեզ համար աղոթում: Հովհաննեսի 17, 24-ում կարդում ենք . ,, Հայր, ում որ ինձ տվիր, կամենում եմ, որ, ուր ես եմ, նրանք էլ ինձ հետ լինեն,,: Եթե մենք ուզում ենք, որ մեր աղոթքները լսվեն, ապա մենք պետք է ջանանք Աստծուց խնդրել այն, ինչը Հիսուսն է Աստծուց մեզ համար խնդրում:

Սրտանց ողջույններով՝

Ձեր՝ Ժան-Լյուք Շնայդեր

Լուսանկարները՝ ՆԱԵ Շվեյցարիա

Թեսաղոնիկեցիներին Ա 5,17

Անդադար աղոթեցեք:

Հունվարի 7-ին գլխավոր առաքյալ Ժան-Լյուք Շնայդերը Բազելում / Շվեյցարիա/ տոնեց տարեսկզբի ժամերգությունը

Աղոթելը գործում է

Սիրելի քույր-եղբայրներ, իրականում սա շատ գեղեցիկ սկիզբ է նոր տարվա համար, մի աղոթք, որը մենք միասին աղոթում ենք՝,, Ցույց տուր մեզ դեպի քո փառահեղություն տանող ճանապարհը,,: Մենք մեր կյանքում մի նպատակ ունենք, դա փառահեղությունն է: Մեր նպատակը ոչ միայն մեր բարեկեցությունն է, մեր երջանկությունն ու մեր հաջողությունը,այլ մենք ավելի մեծ նպատակ ունենք պահած: Մենք ցանկանում ենք լինել փառահեղության մեջ, Աստծո հետ կատարյալ միասնության մեջ: Դա մեր որոշումն է, և դա կա ու մնում է մեր նպատակը նոր տարում: Մենք ցանկանում ենք Տիրոջ օրը Աստծո արքայություն գնալ և Աստծո հետ միասնություն կազմել:

Դա ոչ երազ է, ոչ էլ ցանկալի միտք՝ Հիսուս Քրիստոսի գալուստը հնարավոր դիպված չէ, այն աստվածային իրողություն է և ոչ թե՝ խոստում, որը ինչ-որ մեկն է մեզ տվել: Երբ Աստված և Սուրբ Հոգին խոսում են Տիրոջ օրվա մասին, ներկայացվում է մի բան, որը նրանց աչքերի առաջ է: Որպես մարդ մենք դա դժվար ենք հասկանում, բայց Աստծո համար ապագան ներկա է, անցյալը՝ ներկա: Նա ամեն ինչ իր աչքի առաջ ունի: Նա կապված չէ ժամանակի հետ: Երբ նա մեզ հետ խոսում է Հիսուս Քրիստոսի գալստյան մասին, ապա նա նկարագրում է մի բան, որը նա արդեն տեսնում է, և նրա համար դա արդեն տեղի է ունեցել: Դա մեր մխիթարությունն է: Դա անորոշ խոստում չէ՝ հավանաբար այն մի անգամ տեղի է ունենալու: Ժամանակահատվածը մենք չգիտենք, բայց, որ այն տեղի է ունենալու, պետք է բացարձակ վստահ լինել: Սրանից էլ այս աղոթքը՝ Ցույց տուր մեզ ճանապարհը: Ինչպե՞ս ենք գնալու այնտեղ: Ինչպե՞ս կարող ենք մենք դրա մասնակիցը լինել: Այս աղոթքին միշտ Սուրբ Հոգին է պատասխանում: Նա վկայակոչում է Հիսուս Քրիստոսին: Քրիստոսն է ճանապարհը: Եթե դու ուզում ես Աստծո արքայություն գնալ, եթե դու ուզում ես Հիսուս Քրիստոսի գալստյան ժամանակ ներկա լինել, ապա դու պետք է գնաս Հիսուս Քրիստոսի ճանապարհով: Նրա ուսմունքն ու նրա կյանքն են ճանապարհը: Հետևիր նրա օրինակին և հետևիր նրա ուսմունքին: Այդպես մենք կարող ենք նախապատրաստվել նրա գալստյանը և հասնել մեր նպատակին: Ինչ էլ տեղի ունենա գալիք տարիներին, մենք գալու ենք դեպի Աստված՝ Ցույց տուր մեզ ճանապարհը: Եվ Սուրբ

Հոգին ասում է՝ Նայիր Հիսուս Քրիստոսին, զբաղվիր նրա Ավետարանով և այն կիրառիր կյանքում: Դա է ճանապարհը:

Հիսուս Քրիստոսի ուսմունքի էական բաղադրիչներից է աղոթքը: Աղոթեք ամեն ժամ, աղոթեք անդադար: Հիսուսը դա մանրամասն բացատրում է, ինչպես օրինակ Այրու և դատավորի մասին առակում, երբ նա խոսում էր վերջին ժամանակի մասին: Աղոթեք բոլոր ժամանակներում, մի դադարեցրեք աղոթելը: Սա այս ճանապարհի մի մասն է: Աղոթքը կարևոր բաղադրիչ է Տիրոջ օրվան նախապատրաստվելու համար, և դրա համար էլ այն այս տարվա նշանաբանն է՝ ,, Քո աղոթքը ներգործուն է,,: Սուրբ Հոգին ուզում է մեզ միշտ ցույց տալ այդ ճանապարհը: Նա անգամ ավելին է անում: Նա մեզ ոչ միայն ճանապարհն է ցույց տալիս, նա նաև մեզ խոսք է տալիս՝ Մի մտահոգվիր, այդ ճանապարհին ես միշտ քեզ հետ եմ լինելու: Պողոսը դա այլ կերպ է արտահայտում: Նա խոսում է Հիսուս Քրիստոսի մասին, ով հիմա երկնքում Աստծո գահի մոտ է, և մեզ համար բարեխոսում է: Նա մեր բարեխոսն է, ինչ էլ պատահի: Մենք պատկերացնում ենք դա, Աստծո Որդին գնում է Հոր մոտ և ասում՝ ,, Դու պետք է նրան հիմա օգնես, ներիր նրան, խնդրում եմ: Մի քիչ դժվար է մեր հասկացողությամբ Սուրբ Երրորդության այս պատկերը հասկանալը: Մենք կարծում ենք, որ Հայրը ինչ որ այլ մտադրություն ունի, ապա գալիս է Հիսուսը և ասում՝ Ոչ, դա մի արա, եղիր նրա հանդեպ ողորմած, կամ օգնիր նրան: Այդ ժամանակ Հայրը կփոխի իր կարծիքն ու իր մտադրությունը, քանի որ Հիսուս Քրիստոսը մեզ համար խնդրել է: Մենք գիտենք ու հավատում ենք, որ Սուրբ Երրորդությունը՝ Հայր Աստվածը, Որդի Աստվածը և Սուրբ Հոգի Աստվածը մեկ են: Պողոսը, սակայն, այլ ձևով էր արտահայտվում՝ Աստված միշտ էլ պատրաստ է լինելու քեզ օգնել և քեզ ներել: Երբ նա ասում է՝ Հիսուս Քրիստոսը՝ Աստծո Որդին մեզ համար է բարեխոսել, ապա դա այլ բան չի նշանակում, քան այն, որ Աստված նաև այս տարի է միշտ պատրաստ լինելու քեզ առանց նախապայմանների օգնել ու ներել: Նա միշտ պատրաստ է ու քեզ համար ներկա է: Սա է նշանակում դա:

Աստված այս տարվա ընթացքում էլ է միշտ քեզ համար ներկա լինելու:

Պողոսը նաև ասում էր, որ Սուրբ Հոգին էլ մեզ համար աղոթում և բարեխոսում, երբ մենք խոսքեր չենք գտնում: Սուրբ Հոգին մի մասն է Սուրբ Երրորդության: Դա ոչ մի այլ բան չի նշանակում, քան այն, որ Աստված մեր հոգիների տենչանքը, մեր ցավն ու տառապանքը ընդունում է, անգամ, եթե մենք ճիշտ խոսքը չենք գտնում: Մենք կարող ենք վստահ լինել, որ Աստված ճանաչում է քեզ, նա լսում է քո աղոթքն անգամ այն ժամանակ, եթե դա ընդամենը հոգոց է: Աստված այն միշտ ընդունելու է: Նրան հետաքրքրում է այն, թե ինչպես ես դու: Նա հասկանում է յուրաքանչյուր մտատանջություն: Նրա համար յուրաքանչյուր հոգս կարևոր է: Նա միշտ քեզ համար ներկա է: Նա մեզ ոչ միայն ճանապարհն է ցույց տալիս, նա նաև մեզ վստահություն է տալիս և ասում՝ Մի անհանգստացիր, ես միշտ քեզ համար այստեղ եմ: Ես այստեղ եմ որպեսզի քեզ օգնեմ, քեզ ներեմ, քեզ լսեմ:

Դառնանք նշանաբանին՝ ,,Աղոթեք անդադար,,: Սա չի նշանակում, որ մենք յուրաքանչյուր րոպե, ամբողջ օրը և ողջ գիշեր պետք է աղոթենք: Դա ոչ ոք չի կարող անել: Ամենաքիչը ես չեմ կարող, ես պետք է այլ բաներ էլ անեմ: ,, Անդադար աղոթել,, նշանակում է, որ մենք դա ամեն իրավիճակում պետք է անենք: Դա այլ բան չի նշանակում, քան այն, որ մեր աղոթքը կախված չէ մեր իրավիճակից, իրադրությունից, մեր կարիքներից և վախերից, և հիմնված չէ մեր իրավիճակի և մեր դժվարությունների վրա: Մեր աղոթքն Աստծո հետ մեր հարաբերության արդյունքն է: Սա է տարբերությունը: Շատ մարդիկ աղոթում են, երբ իրենց գործերը լավ չեն և հիշում են այն մասին, որ կա մեկը, ում կարելի է դիմել, կանչել: Անդադար աղոթել նշանակում է՝ մեր աղոթքը արդյունքն է Աստծո հետ մեր հարաբերության: Մենք աղոթում ենք, քանի որ մենք հավատում ենք Աստծուն և գիտենք, որ նա Ամենազոր է: Նրա համար ոչինչ անհնար չէ: Մենք հավատում ենք նրա սիրուն: Նա սիրում է մեզ: Մենք հավատում ենք, որ նա մեզ փրկելու է, և դրա համար էլ միշտ գալիս ենք դեպի նա: Մենք սիրում ենք նրան սրտի ողջ խորությամբ և պահանջ ունենք նրա հետ խոսելու, նրա մոտ գալու և երկխոսությամբ նրա հետ միասնություն կազմելու ու աղոթելու, պարզապես նրա համար, որ մենք սիրում ենք նրան: Մենք այդ շփման կարիքն ունենք: Աղոթենք անդադար՝ անկախ մեր իրավիճակից, պարզապես հավատքից և Աստծո հանդեպ ունեցած մեր սիրուց ելնելով: Սա է մեր հավատի հիմքը:

Աղոթելը գործում է: Աղոթքն իր ներգործությունն ունի: Դա կարող է մեզ ամբողջ տարվա ընթացքում զգալի լինել: Ես չեմ ցանկանում այս թեման ավարտել, բայց եկեք աղոթքի այլ բաղադրիչներին էլ անդրադառնանք և մտածենք այն մասին, թե ինչպես կարող է աղոթքը ազդել, գործել:

Աղոթքի կարևոր բաղադրիչ է ,, երկրպագությունը,,: Քույր-եղբայրներ, ես գիտեմ, որ այն միշտ չէ, որ մեր ավանդույթի մասն է կազմում: Ես կարող եմ հիշել, որ դա իմ երիտասարդ տարիներին թեմա է դարձել: Դա ավելի հետո է շրջանառվել՝ գլխավոր առաքյալներ Ֆեհրի և Լեբերի ժամանակ: Նրանք են դա հաստատել: Աստծուն երկրպագելը կարևոր բաղադրիչ է: Եկեք 2024 թվականին միշտ ժամանակ գտնենք Աստծո մասին մտածելու և նրա էությամբ հետաքրքրվելու: Դրա համար որոշակի ժամանակ է պետք, և պետք է մի քիչ ետ քաշվել և պարզապես մտածել: Ո՞վ է Աստված: Մենք խոսում ենք նրա ամենազորության մասին: Ի՞նչ է նշանակում դա: Աստված Արարիչն է և Ամենազորը: Աստված կատարյալ է, դա մենք այնքան արագ ենք ասում, բայց Աստծո կատարելության մեջ շատ բան է պարունակվում: Նա երբեք սխալ չի գործում: Այն ամենը, ինչ նա անում է, կատարյալ է: Այն ուղղելու կարիք չունի: Այն, ինչ նա ասում է և անում, պարզապես կատարյալ է միշտ և հավիտյան է Աստծո ամենզորությունն ու կատարելությունը, Աստծո մեծությունը, Աստծո սերը: Նա պարզապես այն մեկը չէ, ով սիրում է: Նա սերն է: Նա այլ բան չի կարող, քան՝ սիրել, դա է նրա բնույթը: Արժե միշտ սրանով զբաղվել: Դա կունենա իր ազդեցությունը մեզ վրա: Այն կօգնի մեզ Աստծո հետ ճիշտ հարաբերություն ունենալ, իսկ դրանից կբխի աստվածավախություն և հարգանք: Կգիտակցենք, թե ինչ մեծ է Աստված և ինչ փոքր ենք մենք: Մարդիկ, ովքեր հզոր են և բարձր գոռում են, ամբողջովին փոքր են:

Մյուս կողմից՝ զարգանում է նաև խոր վստահությունը: Աստված ամենազոր է, և կատարյալ է, և սիրում է ինձ: Ես բոլոր հիմքերն ունեմ նրա լիովին վստահելու: Միայն ,, երկրպագության ,, այս ասպեկտը կարող է ազդել մեզ վրա՝ մի կողմից՝ հեզություն, աստվածավախություն, ակնածանք, իսկ մյուս կողմից՝ վստահություն և հավատարմություն: Աղոթքը գործում է: Երկրպագությունը մեզ համար ներգործուն է: Ինչ-որ բան է տեղի ունենում մեր ստերում:

Սիրելի քույր-եղբայրներ, մենք չպետք է դա ամեն օր անենք, բայց եկեք միշտ ժամանակ գտնենք Աստծուն երկրպագելու և նրա էությամբ զբաղվելու: Դա դրական ներգործություն ունի մեզ վրա և դա հրաշալի նախապատրաստություն է Հիսուս Քրիստոսի գալստյանը նրանց համար, ովքեր սիրում են Աստծուն, վստահում են նրան և հավատքով հետևում են նրան: Աղոթքի մյուս բաղադրիչը ,, շնորհակալությունն է,,: Շնորհակալությունը շատ կարևոր է: Ես չեմ ուզում բարոյական քարոզ անել, բայց գուցե այս տարի մենք կարողանանք սիրելի Աստծուն, ավելի եռանդուն շնորհակալ լինել և միշտ հիշել, թե Աստված ինչ է տվել մեզ և ինչ է արել մեզ համար, ինչ է անում և ինչ է անելու: Ես գիտեմ, որ մարդը հակված է նրան, որ միշտ սկզբում տեսնում է այն, թե ինչ չունի կամ՝ դեռ չունի, ինչ այլևս չունի և ինչ է պակասում իրեն: Երբ աշխարհում շուրջդ ես նայում, ամրագրում ես, որ դժգոհությունը կախված չէ մարդու ֆինանսական իրավիճակից: Կան այնպիսիք, ովքեր շատ ունեն, սակայն միշտ դժգոհ են: Ես տեսնում եմ մարդկանց, ովքեր համարյա ոչինչ չունեն, բայց շատ գոհ են: Եզրակացություն՝ գոհ լինելը կախված չէ այն բանից, թե ինչ ունենք կամ չունենք: Գոհ լինելը մեր սրտի վիճակից է: Կան մարդիկ, ովքեր շատ բան ունեն, բայց երբեք գոհ չեն լինում: Հոգևոր առումով ասում եմ ես՝ հիշիր այն մասին, թե Աստված ինչ է տվել քեզ:

Եկեք միշտ ժամանակ գտնենք Աստծուն երկրպագելու:

Երկրպագել նշանակում է՝ ամեն ինչ գալիս է Աստծուց, և եթե ամեն ինչ Աստծուց է գալիս, ապա այն ամենը, ինչ նա է ինձ տվել, գալիս է Աստծուց: Դրա համար շնորհակալ լինելը ուրախություն է պատճառում մեր սրտերին, որն այս աշխարհում հազվադեպ է լինում: Այդ ուրախությունը բերում է գոհություն և հոգում է հոգևոր հավասարակշռության համար: Մենք մեր կյանքում ավելի ուժեղ ենք դառնում: Շնորհակալ եղողն ավելի ուժեղ է, քան անշնորհակալը, նա միշտ հիշում է այն ամենի մասին, ինչ Աստված տվել է իրեն: Նա իր կյանքում միշտ հաստատուն է: Շնորհակալ լինելը մեծ ազդեցություն է ունենում մեզ վրա և մեզ համար օրհնություն է դառնում: Եկեք այս տարի ժամանակ գտնենք շնորհակալություն հայտնելու:

Մենք նաև մեր խնդրանքներով ենք գալիս դեպի Աստված: Ժամերգության սկզբին մենք միասին երգեցինք, որ մենք կարող ենք աղոթքով գալ դեպի Աստված, որպեսզի նրան ամեն ինչ ասենք: Այս միտքը ինձ հետ է: Ես երբեմն վախենում եմ, որ աղոթքը այս կամ այլ տեղ պակասել է, և ավելի քիչ են սիրելի Աստծո հետ խոսում: Պարտադիր չէ, որ աղոթքն ասենք մահճակալի կամ զոհասեղանի առաջ ծնկաչոք վիճակում: Այդ երկխոսությունը կարող է լինել նաև մտքում, երբ մենք կխոսենք Աստծո հետ: Քույր-եղբայրներ, եկեք Աստծո հետ խոսելու այս հնարավորությունից օգտվենք: Սոցիալական ցանցերում այնքան հաճախ են խոսում ու գրում ամեն ինչի և յուրաքանչյուրի մասին: Իսկ ինչպես է աղոթքի, Աստծո հետ երկխոսության

պարագայում: Եղբայր, քույր, դու միշտ կարող ես Աստծո մոտ գալ և նրան ամեն ինչ ասել, իսկապես, ամեն ինչ ասել՝ առանց ամաչելու, առանց վախի, առանց երկյուղի: Մենք կարող ենք շատ ազատ ամեն ինչի մասին խոսել: Գոհ ես, թե՝ դժգոհ, զայրացած ես, թե՝ բարկացած, պարզապես արի դեպի Աստված և ասա նրան մտքերով ու աղոթքով՝ սիրելի Աստված այս բանը ինձնից ջանք է պահանջում, նա ինձ նյարդայնացրել է, նա ինձ վիրավորել է, սա անարդար է – բացահայտ այդ ամենը աղոթքով ասա սիրելի Աստծուն : Դա կգործի: Նա միշտ ժամանակ ունի, իսկ քո հարևանը միշտ չէ, որ ժամանակ է գտնում քեզ լսելու, հինգ րոպե հետո դու նկատում ես, որ նրան քո ասածը բոլորովին չի հետաքրքրում: Սիրելի Աստված միշտ ժամանակ ունի: Այնքան լավ ազդեցություն է թողնում դա իմանալը: Նրա մոտ դու կարող ես ցանկացած ժամի գնալ, միևնույնն է, երբ, նա միշտ ժամանակ ունի քեզ համար: Նա լսում է քեզ և հասկանում:

Երբ երկրպագությունն ու շնորհակալությունը միաժամանակ են հանդես գալիս, աղոթքից ինչ-որ բան է բխում: Մենք Ամենազորի, Կատարյալի և Սիրողի հետ խոսում ենք՝ գիտակցելով, որ նա հասկանում է մեզ, և քանի որ նա Ամենազոր է և Կատարյալ, Մեր է և Փրկիչ, նա արդեն ամեն ինչ ճիշտ կանի: Նա ինձ նաև կօգնի: Նա ավելի լավ գիտի, քան ես, թե ինչի կարիք ունեմ և որն է լավագույնն ինձ համար:

Երկրպագություն՝ նա է Փրկիչը: Ի՞նչ է ուզում նա: Երբ մենք այս հարցով ենք զբաղվում և նրան մեր հոգսերն ու ցանկություններն ենք ներկայացնում, նա հասկանում է մեզ: Նա ուզում է, որ ես հավիտյան ապրեմ իր հետ: Հիսուս Քրիստոսն ուզում է, որ ես այնտեղ լինեմ, որտեղ ինքն է: Ինչքան շատ մենք զբաղվենք այս մտքով, անչքան ավելի շատ կեզրահանգենք՝ սիրելի Աստված, թող քո կամքը լինի: Դա մենք ասում ենք ոչ թե ձևի համար, այլ համոզվածությամբ, անգամ նաև ոգևորությամբ՝ սիրելի Աստված, թող քո կամքը լինի: Ես գիտեմ, թե ինչ ես դու ուզում՝ դու ուզում ես ինձ փրկել: Դու ուզում ես ինձ հավերժ երջանկացնել: Դու ուզում ես ինձ դեպի քո արքայություն տանել, որտեղ այլևս չկա մահ, ցավ տառապանք: Ապա ասում ենք այս աղոթքը՝ քո կամքը լինի, որը մխիթարության և ուժի հրաշալի աղբյուր է: Մենք գալիս ենք դեպի սիրելի Աստված երկրպագությամբ և շնորհակալությամբ, և խոսում ենք ու ասում նրան ամեն ինչ, ինչը լավ չէ և վստահում ենք նրան, իսկ հետո գալիս է պատասխանը Սուրբ Հոգուց՝ հիշեք այն մասին, թե ով է նա և ինչ է ուզում- թող նրա կամքը լինի:

Երբ Հիսուս Քրիստոսն այս երկրի վրա էր, նա բացարձակ վստահ էր, որ Աստված իրեն տալու է այն, ինչ նա նրանից պահանջում է: Նա ուներ այդ հրաշալի վստահությունն ու երաշխավորությունը՝ ինչ ես Հորից պահանջում եմ, նա ինձ տալու է: Այո, այդպես էլ լինում է: Ինչու՞: Քանի որ Տեր Հիսուսը միշտ խնդրել է այն, ինչը Աստված ուզում է նրանով տալ: Այս միտքը ես ֆանտաստիկ եմ համարում: Աստված միշտ լսել է Հիսուսին, քանի որ Հիսուսը միշտ խնդրել է Աստծուց այն, ինչ Աստված ուզում է տալ: Եկեք մենք էլ այդպես անենք: Սիրելի Աստծուց պահանջենք ամենից առաջ այն, ինչ ուզում է մեզ տալ՝ փրկություն, ազատություն, օրհնանք: Իսկ մենք վստահ կլինենք, որ Աստված ուզում է մեզ լսել: Եկեք մեր խնդրանքներով, հոգսերով, վախերով, կարիքներով գնանք դեպի Աստված և շատ ազատ խոսենք դրանց մասին նրա հետ: Դրանում մենք կարող ենք վստահ լինել՝ նա օգնելու է մեզ, իսկ նրա օգնությունն ամենալավագույնն է, որը մենք կարող ենք ստանալ:

Վերջին կետը՝ բարեխոսությունը: Մեր ժամանակներում այն շատ կարևոր է: Մենք կույր չենք: Երբ նայում ենք մեր ընտանիքներին, համայնքներին , ամբողջ աշխարհին, ապա տեսնում ենք, որ շատ մարդկանց վիճակը վատացել է: Ժամերգությունից առաջ եղբայրները ինձ հաղորդեցին, որ այս համայնքում և այս մարզում շատ վատ դեպքեր են տեղի ունենում, և կան քույր-եղբայրներ, որոնք մեծ կարիքի մեջ են: Ես կարող եմ ասել, այդ ամենուր է, և դա ինձ շատ է անհանգստացնում: Մենք չենք կարող պարզապես անտարբեր լինել և ասել, դա այդպես է և վերջ: Ի՞նչ կարող ենք մենք անել: Մենք

կարող ենք մեր ընտանիքների, համայնքների և մարդկանց համար աղոթել: Բարեխոսությունը շատ կարևոր է: Այն շատ կարևոր բաղադրիչ է Հիսուս Քրիստոսի գալստյանը նախապատրաստելու համար: Հիսուսը նրանց է իր հետ տանելու, ովքեր նրան հետևում են և նրա կամքն են կատարում: Նրա կամքն է՝ սիրիր քո մերձավորին, ինչպես ինքդ՝ քեզ, միայն այս պատվիրանից բխում է բարեխոսության անհրաժեշտությունը: Մենք հենց նոր աղոթեցինք մեզ համար և մենք սիրում ենք մեր մերձավորին, ինչպես մեզ ենք սիրում, այսինքն՝ աղոթում ենք նաև մերձավորի համար: Նրա մոտ էլ պետք է ամեն ինչ լավ գնա: Մենք աղոթում ենք նրա համար և կիսում ենք նրա բարեկեցությունը, հոգսերը, վախերը և կարիքները: Քանի որ մենք սիրում ենք նրան, մասնակցում ենք նրա հաղթանակին և գալիս ենք դեպի Աստված ու աղոթում ենք նրա համար: Այս բարեխոսությունը գործում է: Բայց լսվում է հետևյալ ձայնը- բայց՝ ոչ միշտ, և ես դա հասկանում եմ: Ես հաճախ և շատ եմ աղոթել քույր-եղբայրների համար, բայց չնայած դրան՝ նրանք մահացել են: Սիրելի Աստված նրանց չի առողջացրել: Ես մտածում եմ որոշ երկրների մասին, որտեղ ես տասնամյակներ շարունակ խաղաղության համար եմ աղոթել, բայց այնտեղ վիճակն ավելի է վատանում, մարդիկ մեծ զրկանքների միջով են անցնում՝ սիրելի Աստված, ինչ-որ բան արա, բայց ոչ մի բան էլ չի լինում, նրանք մահանում են սովից և այլն: Միտք է առաջանում՝ բարեխոսությունը գեղեցիկ է, բայց ամբողջովին անօգուտ, այն չի գործում: Սա մարդկային մտածելակերպ է և ըմբռնում:

Ես նորից անդրադառնում եմ երկրպագությանը: Ինչպե՞ս ես դու դա պատկերացնում: Դու աղոթում ես, համայնքն աղոթում է,իսկ եթե համայքն աղոթում է, սիրելի Աստված ինչ-որ բան է անում: Իսկ դա նշանակու՞մ է արդյոք, որ սիրելի Աստված լավ մտադրություն է ունեցել, թե ինչպես պետք է լինի, և քանի որ դուք եկել եք և աղոթում եք, նա փոխում է իր կարծիքն ու իր մտադրությունը: Դժվար է այս մտքի շուրջ մտորելը: Քանի որ մենք աղոթում ենք, սիրելի Աստված ասում է՝ քանի որ դուք բոլորդ աղոթում եք, ես կօգնեմ նրան և կփոխեմ իրադրությունը: Դա կնշանակի, որ մենք մեր մերձավորին ավելի շատ ենք սիրում, քան Աստված է նրան սիրում, իսկ քանի որ մենք աղոթում ենք, սիրելի Աստված փոխում է իր կարծիքը և բարին է անում: Մեր փորձը մեզ սովորեցնում է՝ բարեխոսությունը միշտ չէ, որ օգնում է: Մեր հասկացողությունն ասում է՝ քո հավատով դա հնարավոր չէ: Մենք պետք է հասկացողությամբ և փորձով ասենք՝ ես աղոթում եմ հավատով, թեև ես չեմ կարողանում հասկանալ, այն հակասում է իմ սեփական փորձին, բայց ես հավատում եմ:

Տեր Հիսուսը աղոթել է մեզ համար, երբ նա երկրի վրա էր: Առաջին քրիստոնյաներն աղոթում էին միմյանց համար: Պողոսը միշտ ասում էր՝ աղոթեք ինձ համար: Եթե դա լիովին անօգուտ լիներ, այն Աստվածաշնչի մեջ գրված չէր լինի և Տեր Հիսուսը, Պողոսը, Պետրոսը և Երուսաղեմի համայնքը դա չէր անի: Դրա համար էլ բարեխոսությունը գործում է: Դա գրված է Աստվածաշնչում: Մենք պետք է աղոթենք մեր մերձավորի համար, և դա մենք պետք է անենք հավատով ու վստահությամբ: Անգամ, եթե ես չեմ հասկանում, թե ինչպես է այն գործում և իմ փորձն ինձ բոլորովին այլ բան է ասում: Մենք աղոթում ենք մերձավորի համար: Մերձավորի հանդեպ մեր սիրուց ելնելով՝ մենք պահանջ ունենք նրա

համար աղոթելու: Այդ բարեխոսությունն առաջինը ազդում է մեզ վրա: Երբ մենք ժամանակ ենք գտնում ուրիշներով հետաքրքրվելու, ապա մենք նկատում ենք, որ նրա վիճակը շատ ավելի վատ է, քան՝ մերը, թեև նա նույնպես արժանի է, որ իր մոտ էլ լավ լինի, ինչպես մեզ մոտ: Սա բարոյական քարոզ չէ, բայց եկեք մտածենք այս ուղղությամբ:

Երբ մենք տեսնում ենք մեր քույր-եղբայրներին կամ աշխարհի մարդկանց, ապա ամրագրում ենք՝ նրանք նույնքան լավ են, ինչպես ես, բայց նրանք չունեն այն, ինչ ես ունեմ: Այդ դեպքում ճիշտ ձևով հասկանում են, թե ինչ է նշանակում ողորմածություն և դառնում են ավելի շնորհակալ ու նկատում են, որ սիրելի Աստված իրենց նվիրել է ողորմածությունից ելնելով: Նրանք այն չեն վաստակել: Ես չեմ կարող բոլորովին հասկանալ, ինչու ես, և ոչ թե՝ մյուսները: Սիրելի Աստված-շնորհակալություն: Դա կօգնի մեզ հենց սկզբից ավելի լավ հասկանալ, թե ինչ է նշանակում ողորմածություն: Մենք Աստծուն աղոթում ենք վստահելով, երկրպագելով: Աստված սեր է և նա սիրում է նաև իմ մերձավորին, ինչպես ինձ է սիրում: Նա գիտի, թե ինչ է անում, Նա նրան օգնելու է: Դա ենթադրություն կամ հավանականություն չէ- ոչ, մենք գալիս ենք գիտակցելով՝ Աստված օգնելու է: Դա ուժեղացնում է մեզ: Մենք լիովին վստահում ենք Աստծուն: Նա օգնելու է նաև իմ մերձավորին և նրա կամքը կատարվում է նաև մերձավորի համար: Այդ դեպքում մենք գիտակցում ենք, որ մերձավորի և շրջապատի մարդկանց միակ փրկությունը Տիրոջ գալուստն է, փրկությունը և նոր արարչագործությունը: Ինչքան ավելի շատ մենք զբաղվենք այն իրադարձություններով, որ տեղի են ունենում այս երկրի վրա, այդքան ավելի մեծ կլինի այդ համոզվածությունը: Միակ ճանապարհը, միակ փրկությունը իսկապես Աստծո փրկության պլանն է, որ Աստված միանշանակ մարդկանց փրկելու է չարից, չարիքից: Այդ դեպքում ճիշտ է հասկացվում Աստծո փրկության պլանը, և, թե ինչու է նա այդ ամենն անում: Յուրաքանչյուր մարդու միակ փրկությունը նոր արարչագործություն մուտք գործելն է և նորից հավերժ Աստծո հետ ապրել կարողանալը: Դրանից մենք հետևություններ ենք անում: Բարեխոսության հետևանքը մեզ համար շնորհակալությունն է, ողորմածության լավագույն ըմբռնումը, Աստծո հանդեպ վստահությունը, որ նա օգնելու է, և կենտրոնացումը Աստծո փրկության պլանի վրա:

Բարեխոսությունն օգնում է մեզ, բայց բարեխոսությունն օգնում է նաև մեր մերձավորին: Մենք ունենք վստահություն ու Աստծո կողմից համաձայնությունը, որ նա նաև այդ աղոթքներն է լսելու: Նա օգնելու է մեր մերձավորին: Երբ մարդիկ իմանում են, որ մենք աղոթում ենք իրենց համար, նրանց համար դա մխիթարություն է: Կա որևէ մեկը, ով հետաքրքրվում է քեզնով և մասնակցում է քո փրկությանը: Դա շատ կարևոր է, այլևս այնքան էլ շատ մարդիկ չկան, որ այդպես անեն: Մխիթարական է այն մեկի համար, ով գիտի, որ ինչ-որ մեկն աղոթում է իր համար և կիսում է նրա տառապանքը: Մխիթարությունն ուժեղացնում է նաև վստահությունը: Հետո տեղի է ունենում ինչ-որ միստիկական բան: Ես չեմ կարող դա բացատրել, բայց ես այն ապրում եմ ամեն օր: Մարդն իրեն զգում է աղոթող ձեռքերի ներքո: Դա մի գեղեցիկ պատկեր է և մեր հասկացողությամբ այն չենք կարող բացատրել: Բայց, եթե կա մեկը, ով դա ապրում է, ապա դա ես եմ: Ես գիտեմ, որ շատ քույր-եղբայրներ աղոթում են ինձ համար: Ես չգիտեմ ով, ես չգիտեմ քանի հոգի, ես չգիտեմ որտեղ- ես միայն մի բան գիտեմ՝ ես զգում եմ ինձ քույր-եղբայրների աղոթքների ներքո: Ես դա չեմ կարող բացատրել: Դա պարզապես իրողություն է: Շատ քույր-եղբայրների մասին գիտեմ, ովքեր վատ իրավիճակներում են, ես գիտեմ, որ նրանք իրենց զգում են քույր-եղբայրների աղոթող ձեռքերի ներքո: Բարեխոսությունը գործում է, և դրանից բխում է մեր վստահությունն առ այն, որ Աստված օգնելու է:

Երկրպագությունը, շնորհակալությունը, խնդրանքը, բարեխոսությունը գործում են: Եկեք եռանդուն կերպով դրանցով զբաղվենք և եկեք միասին աղոթենք: Երբ մենք միասին աղոթում ենք, օրինակ, Հայր մերը, ապա դա ուժեղացնում է եկեղեցու միաբանությունը: Սրա մասին մենք պետք է ավելի շատ մտածենք: Երբ մենք միասին աղոթում ենք, ըդգծվում է, որ մենք բոլորս միասին վկայում ենք Աստծո ողորմածությունը: Մենք ասում ենք սիրելի Աստծուն՝ եղիր իմ հանդեպ ողորմած: Դա ուժեղացնում է միաբանությունը: Մենք բոլորս ունենք նույն նպատակը և նույն խնդրանքը՝ Յույց տուր ինձ ճանապարհը, ուժեղացրու միաբանությունը: Եկեք ապագայում էլ ավելի շատ արժևորենք միասնական աղոթքը: Աղոթելը գործում է: Ամեն:

Հիմնական մտքեր

- Սուրբ Հոգին մեզ աղոթելու կոչ է անում :
- Տերն աղոթում է մեզ համար:
- Հիսուսի անունով աղոթքը նպաստում է մեր փրկությանը:
- Մեր միասնական աղոթքը ուժեղացնում է եկեղեցու միաբանությունը:

ԵՂԻԱՆ և ՍԱՐԵՓԹԱՑԻ ԱՅՐԻՆ

ԸՍՏ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ Գ-Ի, 17,1-16

Իսրայելում երաշտ էր, արդեն երկար ժամանակ անձրև չէր տեղացել: Աստված Եղիայի համար անապատում հոգ է տանում ագռավների միջոցով: Նրանք նրա համար միս ու հաց էին տանում: Եղիան ջուրը խմում էր Քրիթ առվակից: Սակայն, այդ առուն ևս ցամաքեց:

Աստված հրահանգեց Եղիային՝,, Վեր կաց և գնաՍարեփթա քաղաքը և այնտեղ մնա: Ես մի այրի կնոջ պատվիրել եմ, որ քեզ այնտեղ կերակրի,,:
Եղիան գնաց Սարեփթա:
Երբ Եղիան հասավ քաղաքի դարպասի մոտ, մի կին այնտեղ փայտ էր հավաքում: Եղիան նրան խնդրեց.,, Ինձ համար ամանով մի քիչ ջուր բեր, որ խմեմ,,:
Այրին գնաց բերելու: Եղիան նրա ետևից ձայն տալով՝ ասաց.,, Ինձ համար մի պատառ հաց բեր,,:
Կինն ասաց.,, Ես մի նկանակ



էլ չունեմ, բացի սափորում եղած մի բուռ ալյուրից և կուժի մեջ եղած քիչ յուղից: Ահա մի երկու փայտի կտոր եմ հավաքում, որ գնամ ու հաց պատրաստեմ ինձ և երեխաներիս համար: Այն կուտենք և հետո կմեռնենք,,: Եղիան ասում է նրան.,, Քաջալերվիր,, գնա և արա այնպես, ինչպես ասացիր, սակայն, նախ ինձ համար մի փոքրիկ նկանակ պատրաստիր ու բեր, և ապա պատրաստիր քեզ ու երեխաներիդ համար: Աստված խոստանում է քեզ՝ ալյուրը չի պակասելու սափորում և կուժի յուղը չի նվազվելու, մինչև Տերը նորից անձրև տեղացնի,,: Նա անում է այն, ինչ Եղիան իրեն հանձնարարել է: Եվ Եղիան, այրին ու նրա երեխաները այդ երաշտի ժամանակահատվածում ամեն օր ուտելու բան էին ունենում՝ միշտ ալյուր սափորում, իսկ յուղի կուժն էլ դատարկ չէր լինում:

Այնպես, ինչպես խոստացել է Աստված:

Աղբյուրը՝ Ամագիր՝ Մենք՝ երեխաներս, հրատարակություն 10 2023; ձևավորումը՝ Միրելա Ֆորսունատոյի

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԷԴՎԻՆԻՆ՝ ՖԵՐՖԻՐՍՈՒՄ/ ԲԵԼԳԻԱ/

Իմ անունը Էդվին է և ես հինգ տարեկան եմ: Ես ընտանիքում ամենափոքրն եմ: Ես ունեմ երկու քույր՝ Ռեգինան 15 տարեկան է, իսկ Բրիսեթթեն 14 տարեկան, իմ եղբայր Բենջամինը 11 տարեկան է: Մենք ապրում ենք Ֆերֆիրսում, դա մի քաղաք է Բելգիայի հարավում գտնվող Վալոնյան մարզում: Բելգիան երկլեզու երկիր է՝ մեզ մոտ խոսում են ֆրանսերեն, իսկԲելգիայի հյուսիսային մասում՝ նիդերլանդերեն:

Հայրս՝ Բերնարդոն, քարոզիչ է և Ֆերֆիրսի համայնքի առաջնորդը: Մայրկիս անունը Լաուրեթթե է:

Երեք տարեկանից ես հաճախում եմ նախակրթարան: Երբ ես այնտեղ գնացի, Եվրոպայում Կովիդի առաջին դեպքերը եղան, և իմ դասարանը ևս զերծ չմնաց վիրուսից: Ես վախենում էի վարակվելուց, բայց Աստծո օգնությամբ մեր ողջ ընտանիքը համաճարակով չվարակվեց: Մենք հաճախ ենք մտածում այն ընտանիքների մասին, որոնք կորցրեցին իրենց հարազատներից որևէ մեկին, և բոլոր այն ընտանիքների մասին, որոնք այդ հիվանդությունից տուժեցին, թող Աստված նրանց հետ լինի:

Այս ընթացքում ես մեծացա, ինչպես դուք լուսանկարում ինձ տեսնում եք իմ հայրիկի հետ: Ես նախակրթարանը լավ գնահատականներով ավարտեցի և փոխադրվեցի դպրոց, որտեղ սովորում են իմ երկու քույրերը: Ես արդեն կարողանում եմ կարդալ ու մի քիչ էլ գրել:

Իմ ազատ ժամանակին ես հաճույքով ֆուտբոլ եմ խաղում, ես արդեն եղել եմ Ֆերֆիրսի Բիլմոնթ ստադիոնում:

Իմ սիրելի ուտեստը բոլոնեզյան սոուսով վերմիշելն է, պիցցան և հավի տապակած կրծքամիսը, բայց նաև՝ մակայաբուն, որը աղ դրած ձուկ է:

Ֆերֆիրսի մեր համայնքում ունենք երեխաների մի արտակարգ երգչախումբ: Այնտեղ երգելը ինձ ուրախություն է պարգևում, ես երգերի բոլոր փորձերին մասնակցում եմ:

Աղբյուրը՝ Անսագիր՝ Մենք՝ երեխաներս, հրատարակություն 10 2023, Լուսանկարները՝ մասնավոր՝ Օլգա Լարսոնկա, Դենիս Ռաուենսերի, էնտոնիենկո պիտիկա / stock.adobe

Լուսանկարները՝ VectorMine/adobe.stock

Աստված– ինչ են տեսնում մարդիկ և ինչպիսին է նա իսկապես

Ինչպե՞ս կարող է դա լինել: Հին կտակարանում Աստված զայրացած է, իսկ Նոր կտակարանում նա սեր է: Ինչը որ փոխվել է, նրա էությունը չէ, այլ այն ձևը, որով մարդիկ նրան տեսնում են: Գլխավոր առաքյալը սա պարզաբանում է այս հրատարակության մեջ:

Որպես տնտես Աստծո գաղտնիքների / Կորնթ. Ա 4,1/ առաքյալներն առաջադրանք ունեն հավատացյալներին վկայել Աստծո հայտնությունները: Մարդն ինքն իրեն չի կարող Աստծուն ճանաչել: Մենք Աստծու մասին գիտենք միայն այն, որ նա հայտնվում է մեզ:

Աստված մարդուն հայտնվում է պրոգրեսիայի ձևով: Նա նախ իրեն ճանաչել է տալիս որպես Արարիչ, ապա՝ որպես Տեր Իսրայելի պատմության մեջ: Աստծո մարդացումը Հիսուս Քրիստոսով Աստծո հայտնությունն է, որը վեր է ամեն ինչից: Հոգեգալստյանը Աստված ուղարկում է Սուրբ Հոգուն, որպեսզի մարդկանց լրացուցիր ապացույցներ տա իր և փրկության իր պլանի մասին: Սուրբ Հոգին գործում է նաև այսօր, հատկապես առաքյալների ծառայության միջոցով, եկեղեցական խորհուրդների ճիշտ նվիրաբերումով և խոսքի ճիշտ տեղեկացմամբ: Քրիստոսի գալստյան ժամանակ Աստված կատարյալ ձևով հայտնվելու է բոլոր նրանց, ովքեր վեր են համբարձվել՝ նրանք տեսնելու են Աստծուն, թե ինչպիսին է նա / Հովհաննես Ա 3,2/:

Աստծո հայտնությունը Սուրբ գրքում վկայվում է մարդկանց կողմից, ովքեր ոգեշնչված են Սուրբ Հոգով: Աստվածաշնչյան գրքերի հեղինակները օգտագործում են իրենց լեզուն և գիտելիքները, որպեսզի ներկայացնեն այն, ինչը Սուրբ Հոգին նրանց հայտնում է: Այս առումով հիշենք այն մասին, որ այդ տեքստերից շատերը գրվել են այն իրադարձություններից հետո, որոնց մասին նրանք գրում են:

Արարչագործության պատմությունները ստեղծվել են այն իրադարձությունից երկար ժամանակ հետո, որի մասին նրանք պատմում են, այդպես է նաև ջրհեղեղի մասին պատմությունը: Ավետարանները ևս հրատարակվել են Հիսուս Քրիստոսի հարությունից և երկինք համբարձվելուց տասնամյակներ անց / Ղուկաս 1, 1-4, Նորառաքելական եկեղեցու դավանաբանություն, ՆԱԵԴ 1, 2; 4, 1/:

Սուրբ Հոգու օգնությամբ Աստվածաշունչը կարդացողը կարող է աստվածային կամքը ճանաչել մարդկանց կողմից գրված տեքստերից: Հատկապես առաքյալներին, ովքեր լցված են Սուրբ Հոգով, առաջադրանք է տրված Սուրբ գիրքը հավատի հետ կապի միջոցով ներկայացնել, որպեսզի այդպես ճանաչեն և բացահայտեն աստվածային կամքը:

Աստված Հին և Նոր կտակարաններում

Հին կտակարանը Իսրայելի ժողովրդի Սուրբ գրքերի հավաքածուն է: Այն ձևը, որով այդ գրքերի հեղինակները նկարագրում են Աստծուն, ներկայացնում է իրենց ժամանակի մշակութային և կրոնական միջավայրը: Նրանք Աստծուն հաճախ վերագրում են մարդկային հատկանիշներ: Աստված վիրավորված է, նրա արժանապատվությունն ու պատիվը վիրավորված են: Նա բարկանում է և պատժում: Նա զղջում է, նա ափսոսում է այն բանի համար, ինչ արել է, և որոշում է մեկ այլ ձևով անել:

Աստված զայրացած էր Ադամի և Եվայի վրա: Նրանց պատժի է արժանացնում- տղամարդը պետք է տառապի իր հացը վաստակելու համար, կինը պետք է տառապի, երբ նա ծծնդաբերում է, կինը պետք է ղեկավարվի տղամարդու կողմից, երկուսն էլ դուրս են վռնդվում դրախտից: Մարդկանց չարության վրա զայրացած՝ Աստված զղջում է մարդկաց ստեղծելու համար և ուզում է այն ամենը, ինչ ստեղծել է՝ մարդկանց և կենդանիներին, ջրհեղեղով ոչնչացնել / Մովսես 1-ին, 6, 5-7/: Այն բոլոր դժբախտությունները, որոնք պատում են Իսրայելի ժողովրդին, դիտարկվում են որպես Աստծո կողմից պատիժ՝ անհնազանդության պատճառով: Եվ որպեսզի իր ժողովրդին պահպանի, Աստված կարող է Իսրայելի թշնամիների հանդեպ անհավատալի անխղճություն ցույց տալ:

Հիսուս Քրիստոսը մարդկանց հայտնում է Աստծո ճշմարիտ բնությունը: Նա խոսում է սիրո Աստծո մասին, ով չի պատժում մեղավորին, այլ ուզում է փրկել: Այն դժբախտությունը, որը պատում է մարդուն, Աստծո կողմից եկող պատիժ չէ, այլ՝ չարի տիրապետության հետևանք: Հիսուս Քրիստոսը կատարյալ է՝ առանց մեղքի, սակայն, նա ստիպված էր որպես ամենավատ մեղսագործ, որպես հանցագործ տառապել և մահանալ:

Հին կտակարանը Նոր կտակարանի լույսի ներքո

Հիսուս Քրիստոսը սուրբ գրվածքները, հատկապես թորան, մարգարեական գրքերը և սաղմոսները մեկնաբանում է իր անձի և իր գործունեության տեսանկյունով: Դրանից մենք եզրահանգում ենք, որ մենք Հին կտակարանը Աստծո Որդու տեսանկյունով պետք է պարզաբանենք: Դավանաբանության 1,2,;5,2-ում այսպես է գրված՝ ,, Թե հավատի և ուսմունքի համար ինչ նշանակություն ունեն այն պատմությունները, որոնք հանդիպում են Հին կտակարանի առանձին գրքերում կամ Հին կտակարանի ավելի ուշ շրջանի գրվածքներում, որոշվում է բովանդակային համաձայնությամբ այն ամենի հետ, ինչ ուսուցանում է Ավետարանը:

Հիսուս Քրիստոսը պարզ ասում է, որ Աստված չի ուզում մեղավորին պատժել: Այստեղից էլ մենք կարող ենք Աստծոն դիտարկել ոչ որպես պատժողի, ինչպես ներկայացված է Մովսեսի 1-ինի 3, 14-19 ում՝միայն այն բանի համար, որ նրանք սխալ են գործել, Աստված տղամարդուն ու կնոջը տառապանքի դատապարտեց, տղամարդուն՝ աշխատանքում, իսկ կնոջը՝ ծծնդաբերելիս և տղամարդու տիրապետության գտնվելու հանգամանքով: Հիսուսի ուսմունքի լույսի ներքո և Սուրբ Հոգու առաջնորդությամբ մենք այն տեսակետն ունենք, որ Աստված Ադամին և Եվային միայն իրենց սխալի համար հեռացրեց: Այստեղ կարելի նկատել, որ եթե դա այդպես չլիներ, ապա ցանկացած նախաձեռնություն, որը նպատակ ունի ավելի քիչ դժվարացնել աշխատանքը, Աստծո կամքին հակառակ կլիներ: Այն պատգամը, որը մենք ստանում ենք այս տեղեկությունից, դա այն է, որ Աստված շարունակեց սիրել մարդուն նրա կողմից սխալ գործելուց հետո էլ և խոստացավ ուղարկել Փրկչին:

Անդրադառնանք ջրհեղեղին: Ինչպես կարող էր Աստված, ով ամենագետ և կատարյալ է, զղջալ մարդուն արարելու համար, միայն այն պատճառով,

Սա նկատելի է հատկապես Հիսուս Քրիստոսի մահվան մասին խոսելաձևի մեջ: Որպեսզի նրա փրկությունբերողզոհաբերությաննշանակությունը բացատրեն, աստվածաշնչյան հեղինակները փոփոխականորեն խոսում են Հին կտակարանի զոհաբերության պաշտամունքի մասին / քավության զոհաբերություն/, պատերազմի սովորության մասին / պետք էր փրկագին վճարել գերուն ազատելու համար/ և պատժի իրավունքի մասին / մեղքը պետք է քավվի/:

Տեքստերի նման խոսքային մեկնաբանությունը Աստծուն այն նույն կերպարով են ներկայացնում, ինչպես Հին կտակարանում: Աստված իրեն պահում է որպես իր պատիվն ու արժանապատվությունը վիրավորված մարդ: Նա պահանջում է պատիժ կամ նորից բարի գործերի կատարում: Արդարության համար մեկը պետք է մեռներ: Հիսուս Քրիստոսն այն մեկն է, ով մեզ համար ապաշխարեց:

Հիսուս Քրիստոսի մահվան մասին այս տեսակետը քրիստոնյաների համար այսօր դժվար ընդունելի է, հատկապես երիտասարդների համար: Բարեբախտաբար Սուրբ Հոգին մեզ հնարավորություն է տալիս խոսելու Հիսուս Քրիստոսի մահվան մասին՝ առանց պատժի մասին մտքերի:

Հիսուս Քրիստոսի զոհաբերությունը սիրուց բխող արարք է / Հովհաննես 3,16/: Մեղքի մեջ ընկնելուց ի վեր մարդն ապրում է Աստծուց հեռու: Նրա տառապանքները Աստծո կողմից տրված պատժի հետևանք չեն, այլ՝Աստծուց հեռու գտնվելու հետևանք: Աստված երբեք չի դադարել սիրել մարդուն: Դեռ ավելին, նա որոշել է մարդանալ, տառապել ու մահանալ, որպեսզի մարդուն ցույց տա, որ նա կապված է նրա հետ: Բացի նրանից, որ նա չի պատժում իրենից հեռու ապրող մարդուն, կանգնած է նրա կողքին տառապանքի, մահվան ժամանակ և անգամ, ննջեցյալների աշխարհում: Նա համբերում է, թե ինչպես է ամենավատ մեղսագործը գործում, որպեսզի ցույց տա, որ առանց բացառության նա սիրում է բոլոր մեղավորներին:

Իր սիրով Աստված ուզում է մարդուն իր հետ միասնության տանել: Սակայն, մարդը կարող է Աստծո հետ միասնության մեջ լինել այն դեպքում, երբ իր կամքը համաձայնեցնի Աստծո կամքին: Որպես մարդ Հիսուս Քրիստոսը անմեղ էր: Թեև չար ուժերը նրան ճնշում էին, բայց նա կարողանում էր փորձություններին հակադրվել, Աստծո

որնահամաձայնՄովսեսի1-ինի6,5–ի,հայտնաբերեց նրա չարությունը: Ինչպես պետք էր մարդկանց մեծ մասին ոչնչացնելու միջոցով հեռացվեր մեղքը, երբ նա Նոյին և նրա հարազատներին, ովքեր անմեղ էին, ապրելու հնարավորություն տվեց: Սուրբ Հոգին մեզ ուղղորդում է ջրհեղեղի պատմությունը ազատագրման տեսանկյունով դիտարկելու, այլ ոչ թե՝ պատժի / Պետրոս Ա 3, 18-22/: Աստված սիրում է մարդուն, նա նրան հնարավորություն է տալիս Աստծո հանդեպ հնազանդության միջոցով փրկվելու: Այս նույն եզրակացությունը վերաբերում է Իսրայելի ժողովրդի ողջ պատմությանը:

Հին կտակարանում փրկությունը պայմանավորված էր հնազանդությամբ, որը հասկացվում էր որպես օրենքների խիստ պահպանում: Հիսուս Քրիստոսը մեզ հայտնվել է, որը ճշմարիտ հնազանդություն է: Աստված ուզում է, որ մենք հավատանք Հիսուս Քրիստոսին, և Աստծուն ու մեր մերձավորին սիրենք:

Նոր կտակարանը Սուրբ Հոգու լույսի ներքո

Ինչպես Հին կտակարանի գրքերը, այնպես էլ Նոր կտակարանի գրքերը գրվել են մարդկանց կողմից, որոնք կապված են իրենց ժամանակի հետ: Սուրբ հոգով ոգեշնչված՝ օգտագործել են իրենց խոսքերն ու գիտելիքները, տեղեկացնել են Հիսուս Քրիստոսի գործենության մասին և Սուրբ Հոգու հայտնությունը ամրագրել: Նրանք դիտարկել են նաև հասցեատերերի մշակույթը, որպեսզի վստահ լինեն, որ հասկացվելու են նրանց կողմից: Նոր կտակարանի գրվածքներում Ավետարանի պատգամը միշտ նույնն է, բայց տեղեկացման ձևը կախված է գրողից և ընդունողից:

հանդեպ հավատարմությունը պահել և իր սիրո մեջ հաստատուն մնալ: Նրա կատարելությունը նրա համար հնարավոր դարձրեց, որ նա որպես ճշմարիտ մարդ, և ոչ միայն որպես ճշմարիտ Աստված,միասնության մեջ մնալ Հայր Աստծո և Սուրբ Հոգու հետ: Ոչ մ ի այլ մարդ չի կարող հասնել նրա կատարելությանը: Սակայն, իր սիրով Հիսուս Քրիստոսը պատրաստ է իր հաղթանակը և վաստակը կիսել նրանց հետ, ովքեր իրեն հավատում և հետևում են: Նման պատգամը ներգործում է սրտերի վրա:

Հովհաննեսի Հայտության մեկնաբանությունը առաքյալների ծառայության միջոցով

Մակերեսային կարդալիս Հովհաննեսի Հայտնությունը խոսում է աշխարհի վերջի, Աստծո բարկության, անաստվածների պատժի մասին: Սուրբ Հոգին թույլ է տալիս մեզ հասկանալ, որ ամենից առաջ այն խոսում է չարի նկատմամբ Քրիստոսի հաղթանակի և առանց նախապայմանների մարդու հանդեպ ունեցած նրա սիրո մասին:

Հովհաննեսի Հայտնությունը անդրադառնում է Հիսուսի հայտնությանը փրկության պլանի հետագա ընթացքի ժամանակ և շարունակում է այն զարգացնել: Հիսուս Քրիստոսն ինքն է հայտնում իր գալստյան մասին:Նա հայտնում է Պողոս առաքյալին իր գալստյան հետ կապված իրադարձությունները / Թեսաղոն. Ա. 4, 15-17, Կորնթ. Ա. 15, 51,52/: Սուրբ Հոգու առաջնորդությամբ առաքյալները նշում են փրկության պլանի տարբեր հատվածներ՝ առաջին հարությունը, հազարամյա խաղաղության թագավորությունը,Վերջինդատաստանը, նոր արարչագործությունը:

Առաքյալի առաջադրանքն այն է, որ հավատացյալներին նախապատրաստի Տիրոջ գալստյանը: Նրանք, ովքեր կընդունվեն, կարող են որպես առաջնեկներ մուտք գործել արքայություն: Իսկ ի՞նչ է լինելու մյուսների հետ, օրինակ, նրանց հետ, ովքեր երբեք չեն լսել Հիսուսի՝ մասին: Կարո՞ղ են նրանք էլ փրկվել՝ առանց Հիսուսին հետևելու: Աստծո սերն ուզում է, որ բոլոր մարդիկ իր արքայություն մտնեն: Նրա արդարությունն ուզում է, որ բոլորն էլ գնան նույն ճանապարհով, որպեսզի դրան հասնեն, իսկ միայն ՀիսուսՔրիստոսի միջոցով կարող են Հոր մոտ գնալ / Հովհաննես 14,6/: Դրա համար էլ յուրաքանչյուրը պետք է ճանաչի Հիսուս Քրիստոսին և որոշում կայացնի հետևել նրան: Դրա համար Հիսուս Քրիստոսն իր խաղաղության թագավորությունն է հիմնելու երկրի վրա: Միայն այն ժամանակ լիակատար ավարտին կհասնի փրկության պլանը, երբ բոլորն ազատ որոշում կայացրած կլինեն հանուն կամ ընդդեմ Քրիստոսի:

Այս ուսմունքը նորառաքելական դավանանքի առանձնահատկությունն է- շատ եկեղեցիներ ելնում են այն բանից, որ Հիսուսի գալուստը կապված է Վերջին դատաստանի հետ: Ափսոս, որ նրանք վրիպում են փրկության պլանի մի էական քայլը, որը վկայկոչում է ինչպես Աստծո սերը, այնպես էլ՝ Աստծո արդարությունը: Մենք ուրախանում ենք Ավետարանը այլ դավանանքի քրիստոնյաներին տեղեկացնելու համար և պատրաստ ենք նրանց հետ միասին աշխատել, որպեսզի դրան նպաստենք: Բայց, մենք մնում ենք մեր ուսմունքին ամուր կապված, ինչպես վկայում է դավանաբանությունը, որովհետև մենք դրանում համոզված ենք, որ այն Սուրբ Հոգով հայտնվում է առաքյալներին:

Խմբագրական
Հրատարակիչ՝ Ժան-Լյուք Շնայդեր, Իուբերլանդսշթրասսե 243, 8051 Ցյուրիխ/Շվեյցարիա
Ֆրիդրիշ Բիշոֆֆ ՍՊԸ հրատարակչություն, Ֆրանկֆուրտյան փողոց 233, 63263 Նոյ-Իզենբուրգ / Գերմանիա
Խմբագիր՝ Սիմոն Հայնիգեր

Եկեղեցու ղեկավարումը սերնդափոխությամբ

Նորառաքելական տարածաշրջանային եկեղեցու ղեկավարության շրջանում սկսվել է սերնդափոխություն՝ 2023-ին երկու օգնականներ ստանձնեցին շրջանային առաքյալի պաշտոնը, նշանակվեց նոր օգնական – ըստ պլանի:

Լուսանկարները՝ ՆԱԵ Հարավային Աֆրիկա

Շրջանային առաքյալները շրջանային առաքյալների ժողովի ժամանակ Հոգեգալստյանը 2023 Քափշտատում / Հարավային Աֆրիկա/

Շրջանային առաքյալների օգնականների ավելի շատ նշանակումներն ունեն պարզ ռազմավարություն՝ Շրջանային առաքյալներին ուղղված պահանջները միշտ հսկայական են եղել, հատկապես մի աշխարհում, երբ ամեն ինչ միշտ դժվարանում է,- ասում է գլխավոր առաքյալը: Ուստի՝ առաջնորդող անձնակազմին չպետք է հենց այնպես թողնել և տեսնել, թե ինչ է լինելու: Ավելի շատ կարևոր է, որ ապագա շրջանային առաքյալը հնարավորություն ունենա ինտեգրվել իր աշխատանքային ոլորտին և ճանաչի իր մարդկանց, ինչպես նաև առաջին փորձառությունները ձեռք բերի շրջանային առաքյալների ժողովում՝ միասնական աշխատանքի միջոցով:

Հյուսիսային և Միջին Եվրոպայում

Հավատքի մարդ և սիրո մարդ, իմաստուն առաջնորդ և արիությամբ լի առաջնորդ-ամենից առաջ՝ իսկական ընկեր, այս դափնիները գլխավոր առաքյալը վերագրեց ամերիկացի շրջանային առաքյալ Լեոնարդ Ռ. Կոլբին: Սեպտեմբերի վերջին 67-ամյա այս եղբայրը 50 տարվա սպասավորությունից հետո ուղարկվեց հանգստի:

Նրա աշխատանքային շրջանը տարածվում էր ամբողջ ԱՄՆով, ընդգրկում Բահամյան կղզիները, Բարբադոսը, Բելիզեն, Բերմուդան, Գայման Իսլանդիան, Կոլումբիան, Կոստա Ռիկան, Դոմինիկան, Դոմինիկյան Հանրապետությունը, Էկվադորը, Էլ Սալվադորը, Գվատեմալան, Գվինեան, Հայիթին, Հոնդուրասը, Ջամայկան, Մեքսիկան, Նիկարագուան, Պանաման, Պերուն, Սանտա Քիթսն ու Նեվիսը, Սանտա Լուչիան, Սանտա Վիսենտը և Գրենադիան, Թրինիդադը և Տոբագոն, ինչպես նաև Վենեսուելան:

Հիմա այս տարածաշրջանի համար պատասխանատու է Ջոն Շնաբելը: Արդեն նախկին շրջանային առաքյալի օգնականը այդ նույն ժամերգությանը շրջանային առաքյալ կարգվեց: 59-ամյա սպասավոր այս եղբայրն ապրում է Նյու-Յորքից քիչ հեռու, ունի չորս երեխա և չորս թոռ, իսկ մասնագիտությամբ ներդրումների մենեջեր է:

Հարավային Աֆրիկայում

Իմաստությամբ, սիրով և վճռականությամբ լի առաջնորդող, ուժեղ հավատ ունեցող և Աստծուն հավատարիմ, ինչպես նաև վարակիչ ուրախությամբ և ոգևորությամբ լի՝ խոսքերի այսպիսի,, ծաղկեփնջով,, ներկայացրեց գլխավոր առաքյալը Հարավային Աֆրիկայի շրջանային առաքյալ Ջոն

Լ. Քրիելին: Եկեղեցու միջազգային ղեկավարը 67-ամյա այս սպասավոր եղբորը դեկտեմբերի սկզբին տարբեր պաշտոններում 46 տարի ծառայությունից հետո ուղարկեց հանգստի:

Նա մշտական սպասավորն էր Հարավային Աֆրիկայում, Բոթսվանայում, Ֆոլկլանդյան կղզիներում, Մադագասկարում, Մաուրիթիուսում, Մայոթթեում, Մոզամբիկում, Նամիբիայում, Ռոյնիոնում, Սեյշելյան կղզիներում, Սանտա Հելենայում և Սվազիլանդում: Այս տարածաշրջանը հիմա այսօրվա օգնական Փեթեր Լամբերթի աշխատանքային շրջանն է, ով այդ նույն ժամերգությանը կարգվեց շրջանային առաքյալ: 59-ամյա այս սպասավորը տարածաշրջանային եկեղեցուց դուրս էլ լավ հայտնի է: Փեթեր Լամբերթը 1989-ից մինչև 2017-ը Քափի տարածաշրջանային եկեղեցու, ինչպես նաև Հարավային Աֆրիկայի երաժշտական մենեջերն է եղել, և հրատարակել է երգեր երգարանի ու երգչախմբի համար:

Նոր տարում

Նորառաքելական տարածաշրջանային եկեղեցու ղեկավարության շրջանում արդեն ուրվագծված են փոփոխություններ:

Այսպես՝ Թոմաս Դոյբելը 2023-ի սեպտեմբերին նշանակվեց շրջանային առաքյալի օգնական: Նա 2024-ի երկրորդ կիսամյակում Շվեյցարիացի շրջանային առաքյալ Յուրգ Զբինդենին պետք է հաջորդի: Պատասխանատվության շրջանը Շվեյցարիայի հետ միասին ընդգրկում է Բուլղարիան, Ջիբրալթարը, Իտալիան, Կուբան, Մոլդովան, Ռումինիան, Սլովակիան, Սլովենիան, Իսպանիան, Չեխական Հանրապետությունը, Հունգարիան և Ավստրիան:

Արդեն 2022-ի դեկտեմբերին Շտեֆան Փյոշելը որպես օգնական է նշանակվել Արևմտյան Գերմանիայի տարածաշրջանում: Այս շրջանի ղեկավարումը 2024-ի հունիսին շրջանային առաքյալ Ռայներ Շթորքից հանձնվելու է նրան: Այդ թվում նաև՝ Ալբանիան, Ալժիրը, Անգլիան, Հայաստանը, Ադրբեջանը,, Բելգիան, Բուրկինո Ֆասոն, Ֆրանսիան, Ֆրանսիական Գվիանեան, Ֆրանսիական Պոլինեզիան, Գամբիան, Վրաստանը, Հունաստանը, Գվադելուպեն, Գվինեա-Բիսսաուն, Իրանը, Հորդանանը, Քափ Վերդը, Կոսովոն, Լիտվան, Լիբանանը, Լատվիան, Լուքսեմբուրգը, Մալին, Մալթան, Մարոկկոն, Մարտինիքվեն, Մավրիտանիան, Նոյկալեդոնիան, Նիդերլանդները, Նիդերլանդական Անթիլլեն, Նիգերիան, Արևելյան Թիմորը, Պորտուգալիան, Սենեգալը, Սուրինամը, Սիրիան, Սեռ Թոմեն, Փրինսիփը, Թունիսը, Թուրքիան, Կիպրոսը և Եգիպտոսը:

Փոփոխություններ առաքյալների շրջանում

Անցած տարի եղավ 30 ձեռնադրություն առաքյալների պաշտոնում և 24 առաքյալ ուղարկվեց հանգստի: Ներկայացնում ենք առաքյալների բոլոր ձեռնադրությունները 2023-ի երկրորդ կիսամյակում՝

հուլիսի 2-ի ժամերգությանը Լուանդայում / Անգոլա/ գլխավոր առաքյալ Ժան- Լյուք Շնայդերը մինչ այդ պահը եպիսկոպոս Ռիկարդո Կիակու Սիմաոյին ձեռնադրեց / 1987/ առաքյալ: Հուլիսի 16-ին Քինշասայում/ Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն/ ժամերգության ժամանակ երեք հոգևորական ընդունեցին առաքյալի պաշտոնը՝ քարոզիչ Գիրեսսե Մաթա Մանզալան / 1984/, քարոզիչ Ռոգեր Նզամբիվիսի Նդոնգան / 1972/ և հովիվ Հենրի Չեչե Նգոյ Նգոյը / 1974/: Բոլոր երեքն էլ շրջանային առաքյալ Միխայել Դեփփների տարածաշրջանում են գործում:

Նոյքիրշենում / Գերմանիա/ հուլիսի 30-ին մինչ այդ պահը շրջանային ավետարանիչ Կարսթեն Դենքերին / 1972/ գլխավոր առաքյալը ձեռնադրեց առաքյալ: Նա գործում է Արևմտյան Գերմանիայի տարածշրջանային եկեղեցում: Շրջանային առաքյալի օգնական Թոմաս Դոյբելի առաքելական տարածաշրջանը ընդունում է Ռեթո Քելլերը / 1965/: Սեպտեմբերի 17-ի ժամերգությանը մինչ այդ պահը եպիսկոպոս եղած սպասավոր եղբայրը ձեռնադրվում է առաքյալ:

Հոկտեմբերի 15-ին Բուենոս Այրեսում/ Արգենտինա/ գլխավոր առաքյալը շրջանային ավետարանիչ Պեդրո Ռամիսին / 1973/ և հովիվ Օմար Պաբլո Պինեյրոյին / 1969/ ձեռնադրեց առաքյալի պաշտոնի: Միաժամանակ երկու նոր առաքյալներ ունեցան շրջանային առաքյալ Ռայներ Շթորքի աշխատանքային տարածաշրջանը հոկտեմբերի 29-ին՝ եպիսկոպոս Ռենե Ֆոլլմաննը / 1978/ և Գերդ-Գյունթեր Քիսսելբախը / 1970/ Բադ Սասսենդորֆում / Գերմանիա/ ժամերգության ժամանակ ձեռնադրվեցին առաքյալի պաշտոնին:

Լուսանկարը՝ ՆԱԵ Շվեյցարիա

Տեղեկատու

04.04.2024	Բուենոս Այրես (Արգենտինա)
05.04.2024	Բուենոս Այրես (Արգենտինա)
07.04.2024	Մոնտեվիդեո (Ուրուգվայ)
03.05.2024	Կուանդո Կուբանգո (Անգոլա)
05.05.2024	Ռուանդա(Անգոլա)
12.05.2024	Բորկում(Գերմանիա)
19.05.2024	Լուցերն (Շվեյցարիա)
31.05.2024	Դիլի (Արևելյան Թիմոր)
02.06.2024	Դիլի (Արևելյան Թիմոր)
04.06.2024	Դենպասար (Ինդոնեզիա)
07.06.2024	Պապուա – Նորգվինեա
09.06.2024	Պապուա - Նորգվինեա
23.06.2024	Նիդերրայն (Գերմանիա)
28.06.2024	Հարարե (Զիմբաբվե)
30.06.2024	Մզուզու (Մալավի)

New Apostolic Church
International